ՀԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
19.03.2012թ. թիվ 1/224Լ որոշմամբ
Հավելված 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ-2012

Բովանդակություն

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 5

ՄԱՍ 1. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 9

1.1 Ներածություն 9

1.2 Ֆինանսական համակարգի առանձնահատկությունները 10

1.3 Ֆինանսական համակարգի կայունությունը և մրցակցությունը 11

ՄԱՍ 2. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ 15

2.1. Հակամրցակցային համաձայնագրեր և կարտելներ 15

2.1.1. Հակամրցակցային համաձայնագրերի հասկացությունը, դրանց բնորոշ նշանները 15

2.1.2. Հակամրցակցային համաձայնությունների (Կարտելների) բացահայտումը: Հանդուրժողականության քաղաքականություն՝ “Leniency policy” 17

2.2. Գերիշխող դիրքի չարաշահում 18

2.2.1 Տնտեսվարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի

չարաշահում արձանագրելու քայլերը 19

2.3 Համակենտրոնացումներ (միացումներ) 22

2.3.1 Հասույթը, որպես համակենտրոնացումների հայտարարարման սահմանաչափի չափանիշ 22

2.4 Տնտեսական մրցակցության կանոններից բացառությունները 24

2.4.1. Բացառությունը Հետազոտությունների և զարգացման համաձայնագրերի համար 26

2.4.2.Մասնագիտացման համաձայնագրերի ազատումը 27

2.4.3.Ապահովագրության ոլորտում որոշ համաձայնագրերի նկատմամբ բացառությունների կիրառումը 28

2.5 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 31

ՄԱՍ 3. Առաջարկություններ 35

3.1 Համակենտրոնացումներ 36

3.2 Հակամրցակցային համաձայնություններ 37

3.3 Գերիշխող դիրքի չարաշահում 38

3.4 Որպես կարճաժամկետ նպատակ առաջարկվում է նաև 38

3.5 Երկարաժամկետ առաջարկությունները 39

Հավելված 1 40

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական մրցակցությունը ֆինանսական կայունության համատեքստում

Ֆինանսական շուկայի կայունության և զարգացման ապահովման կարևոր նախադրյալներից մեկը հանդիսանում է ազատ տնտեսական մրցակցության պայմանների ստեղծումը շուկայի մասնակիցների համար: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մրցակցությունը ֆինանսական ոլորտում միշտ դիտարկվել է որոշակի վերապահումներով և երկար ժամանակ ոլորտում մրցակցության կանոնների կիրառումը խիստ կարգավորումների և սահմանափակումների առարկա է հանդիսացել: Ներկայիս ճգնաժամի պայմաններում քննարկվում է՝ արդյոք մրցակցությունը ցանկալի է համակարգային ճգնաժամների ընթացքում, քանի որ ճգնաժամային պայմաններում ֆինանսական ոլորտում շուկայում ծառացած յուրաքանչյուր խնդիր պետք է քննարկել ֆինանսական համակարգի կայունության լույսի ներքո:

Այս հանգամանքները, ֆինանսական ոլորտի օրենսդրական զարգացումները, ինչպես նաև ֆինանսական ոլորտում մրցակցության բնագավառում ծագած մի շարք խնդիրներ լուրջ ազդակներ հանդիսացան անդրադառնալու ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկայում տնտեսական մրցակցության ապահովման և կարգավորման գործուն մեխանիզմների կիրառմանը:

Տնտեսական մրցակցությունը միասնական, ռիսկերի վրա հիմնված և կանխարգելիչ վերահսկողության համատեքստում

ՀՀ կենտրոնական բանկը հանդիսանում է ՀՀ ֆինանսական շուկայի կայունությունն ապահովող պատասխանատու մարմինը. վերջինիս առաջնահերթ՝ օրենսդրորեն ամրագրված խնդիրներից է համարվում ֆինանսական շուկաների կայունությունը: Բացի այդ կենտրոնական բանկը, ինչպես ֆինանսական հատվածի յուրաքանչյուր խնդիր, այնպես էլ մրցակցության ոլորտի խնդիրները դիտարկում է ամբողջ ֆինանսական շուկայի համատեքստում՝ միևնույն ժամանակ բացահայտելով դրանց հնարավոր կապերը ինչպես ֆինանսկան համակարգի կոնկրետ, այնպես էլ մյուս ոլորտներում առկա խնդիրների հետ:

Հարկ է նշել, որ Կենտրոնական բանկի այս գործելակերպը բխում է նաև նրա՝ ՀՀ ֆինանսական համակարգի միասնական կարգավորողի և վերահսկողի էությունից:

Ֆինանսական ոլորտի մրցակցության կարգավորման առանձնահատկությունների համատեքստում կարևոր նշանակություն ունեն նաև ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կիրառվող վերահսկողության սկզբունքները: Այսպես՝ ՀՀ կենտրոնական բանկը հանդիսանում է ֆինանսական համակարգի միասնական վերահսկող և իրականացնում է **ռիսկերի վրա հիմնված և կանխարգելիչ** վերահսկողություն:

Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության սկզբունքի ներքո ֆինանսական կազմակերպությունների հանդեպ վերահսկողությունն իրականացվում է համակարգի կայունության համար իրական և կարևոր

ռիսկերի բացահայտման և դրանց վերացման նպատակով: Այս տեսանկյունից ՀՀ կենտրոնական բանկը մրցակցության ոլորտում տեղի ունեցող զարգացումներին ևս արձագանքում է՝ կարևորելով դրանցից ծագող ռիսկերը:

Հարկ է նշել, որ ֆինանսական ոլորտում, այդ թվում ֆինանսական կազմակերությունների ազատ մրցակցության պաշտպանության խնդիրների նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած վերահսկողությունը ունի կանխարգելիչ, այլ ոչ թե պատժիչ բնույթ: Կարևորելով յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության դերը ողջ ֆինանսական համակարգում՝ կենտրոնական բանկի վերահսկողական իրավասությունները ենթարկվում են որոշակի սահմանափակումների՝ հաշվի առնելով կոնկրոտ ֆինանսական կազմակերպության առանձնահատկությունները: Մասնավորապես, պատասխանատվության միջոց կիրառելիս վերահսկողը պարտավոր է հաշվի առնել դրա ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի վրա: Այսպես օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 63-հոդվածի 4-րդ մասով սահմանվում է պահանջ, համաձայն որի տուգանքի գումարի չափը չպետք է հանգեցնի տուգանվող բանկի ծանր ֆինանսական կացությանը:

Մրցակցության կարգավորման առանձնահատկությունները ֆինանսական շուկայում

Բացի այդ, ֆինանսական շուկայի առաջնահերթությունները կարող են էականորեն տարբերվել տնտեսության մյուս ոլորտներից: Այսպես՝ Կենտրոնական բանկը հայտարարել է, որ ֆինանսական շուկայում խրախուսում և օժանդակում է միացումների և ընկերությունների խոշորացման գործընթացը: Հարկ է նշել, որ այս տեսանկյունից Կենտրոնական բանկի և Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի քաղաքականությունները էապես տարբերվում են: Տնտեսական մրցակցության պաշտպանության ՀՀ օրենսդրության համաձայն համակենտրոնացումների մասին դրույթները, որոնք Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը տարածում է նաև ֆինանսական կազմակերպությունների վրա, խիստ կարգավորումներ են նախատեսում, ինչը էականորեն խաթարում է ֆինանսական

կազմակերպությունների գործունեությունը:

Ներկայումս ՀՀ ֆինանսական շուկայի վերջին զարգացումները պայմանավորված են ապահովագրության ոլորտի օրենսդրական նորամուծություններով: Մասնավորապես՝ պայմանավորված ոլորտում պարտադիր ապահովագրության տեսակի ներդրմամբ՝ պետք է ընդգծել ապահովագրության ոլորտում մրցակցության պաշտպանության ապահովումը: Այս խնդրի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ապահովագրության ոլորտում դեռևս կարող են ներմուծվել պարտադիր ապահովագրության նոր տեսակներ: Սա իր հերթին կարող է ապահովագրական ընկերությունների կողմից ոլորտում ազատ մրցակցության խախտման հիմք հանդիսանալ:

Մրցակցության ոլորտում հետազոտությունները ցույց տվեցին, որ ֆինանսական շուկայում մրցակցությունը կարգավորվում և կիրառվում է՝ ֆինանսական շուկայի առանձնահատկությունները հաշվի առնելով: Այսպես օրինակ՝ Միացումների մասին 139/2004 կանոնակարգով բանկերի և ապահովագրական ընկերությունների համար, ի թիվս ընդհանուր կարգավորումների սահմանված են ոլորտից բխող առանձնահատկություններ: Դրանք, մասնավորապես, առնչվում են տարեկան շրջանառության հաշվարկման կարգին. կանոնակարգով, բանկերի համար առանձին հրահանգով սահմանվում են այն տարրերը, որոնցով պետք է հաշվարկվի բանկերի, ապահովագրական ընկերությունների տարեկան շրջանառությունը, որն էլ իր հերթին օգտագործվում է շուկայի մասնաբաժնի հաշվարկման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու և բարեփոխելու ՀՀ կենտրոնական բանկին՝ որպես ֆինանսական ոլորտի կայունության պատասխանատուի, օրենսդրորեն վերապահված լիազորությունների իրականացման գործնական մեխանիզմները, մասնավորապես՝ նախաձեռնել բարեփոխումներ և ներմուծել գործուն մեխանիզմներ ֆինանսական ոլորտում ազատ մրցակցության ապահովման նպատակով: Ի դեպ, այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես միջազգային վերջին զարգացումները, այնպես էլ ՀՀ ֆինանսական

շուկայի զարգացումները և մրցունակության բարձրացումը ֆինանսական շուկայի տարբեր ոլորտներում:

Կենտրոնական բանկի դերի աննախադեպ կարևորությունը այս խնդրում ընդգծվում է՝ հատկապես ֆինանսական ճգնաժամի իրավիճակում ի հայտ եկող ռիսկերի և մարտահրավերների պայմաններում:

ՄԱՍ 1. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1.1 Ներածություն

Ազատ մրցակցության ապահովումը համարվում է ցանկացած երկրի տնտեսության զարգացման հիմնական նախապայմաններից մեկը, և ֆինանսական ծառայությունների ոլորտը նույնպես բացառություն չի հանդիսանում:

Ազատ մրցակցությունը սպառողի համար երաշխավորում է ինչպես մատուցվող ծառայությունը այնպես էլ ծառայությունը մատուցողին ընտրելու հնարավորությունը, դրանով իսկ նպաստելով մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և ծառայության վճարի նվազեցմանը:

Բացի դրանից, ազատ մրցակցությունը ստիպում է ծառայություն մատուցողներին անընդհատ մտածել նորարարություններ ներմուծելու ուղղությամբ՝ իրենց ծառայությունն ավելի հրապուրիչ ու պահանջվող դարձնելու համար:

Գոյություն ունի մրցակցության կարգավորման երկու հիմնական մոդել, առաջինը ԱՄՆ-ի, երկրորդը՝ Եվրոպական միության մոդելը, որոնք, չնայած ունենալով որոշ տարբերություններ պայմանավորված դրանց պատմական զարգացման նախադրյալներից, ըստ էության նույն հիմնական նպատակներն ունեն՝ սպառողների շահերի պաշտպանությունը, այդ թվում նաև նրանց ընտրելու հնարավորության ապահովումը, շուկայական տնտեսությունում ապրանքների ու ծառայությունների ազատ տեղաշարժը, մրցակիցների համար շուկայի հավասար մատչելիության ապահովումը: Հարկ է մատնանշել, որ ԱՄՆ-ում մրցակցության համար պատասխանատու մարմինները երկուսն են՝ ԱՄՆ Federal Reserve-ը և ԱՄՆ Արդարադատության վարչությունը (U.S. Department of Justice), իսկ ԵՄ-ում ԵՄ մակարդակով մրցակցության համար պատասխանատու մարմինը ԵՄ Հանձնաժողովն է:

Ընդհանուր առմամբ մրցակցության կարգավորումը հանգում է հետևյալ հիմնական ուղղություններին՝ բացառել շուկայի մասնակիցներից մեկի կողմից

իր գերիշխող դիրքի չարաշահումը և բացառել շուկայի մասնակիցների միջև այնպիսի համաձայնությունները (պայմանավորվածությունները) որոնք կսահմանափակեն ազատ առևտուրը կամ ծառայությունների մատուցումը:

Այս հիմնական ուղղությունների ներքո են սահմանվել մրցակցության կարգավորման հիմնասյուները, այդ թվում նաև Եվրոմիության մակարդակով:

1.2 Ֆինանսական համակարգի առանձնահատկությունները

Մրցակցության կարգավորման ներկայումս գոյություն ունեցող տեսությունն ու իրավակիրառ պրակտիկան (ինչպես ԵՄ-ում, ԱՄՆ-ում այնպես էլ տարածաշրջանային բոլոր մակարդակներում) արձանագրում են ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցության կարգավորման առանձնահատուկ սկզբունքների ու կանոնների անհրաժեշտությունը:

Հայտնի է, որ ֆինանսական կազմակերպություններն (հատկապես դրանք, որոնք ավանդներ են ներգրավում) առանձնահատուկ են իրենց՝ կայունության նկատմամբ խոցելիության պատճառով: Բացի այդ, հանրության միջոցները ավանդների տեսքով պահվում են բանկերում: Բանկային ոլորտում անկայունությունը կարող է բխել.

- Պարտավորությունների հատվածից, որն էլ իր հերթին խոցելի է ավանդատուների՝ ավանդների հետպահանջի և համակարգային ճգնաժամների նկատմամբ,
- Բանկերի ակտիվների հատվածից:

Տարանջատվում են ավանդների հետպահանջի երկու հիմնական տեսակներ՝

- Տագնապից բխող,
- Հիմնական գործունեությունից բխող:

Տագնապը առաջանում է, երբ ավանդատուները կորցնում են բանկի նկատմամբ վստահությունը և սկսում են բանկից հանել իրենց միջոցները անկախ իրենց ունեցած սպառողական կարիքների:

Հիմնական գործունեությունից բխող ավանդների հետպահանջը պայմանավորված է բանկի վատ գործունեության հետ: Օրինակ, երբ բանկերի մոտ վարկերի հետվերադարձելիությունը ցածր է, բանկի ավանդատուները կանխազգում են բանկի ֆինանսական դժվարությունները և հետ են պահանջում իրենց ավանդները:

Համաձայն մասնագիտական գրականության և առհասարակ քաղաքականության ոլորտում բանկերի ձախողման հետ կապված հիմնական անհանգստությունը և վարակման ռիսկն է: Դրա էությունը կայանում է նրանում, որ մի բանկի ձախողումը, կամ այդ մասին տեղեկատվության տարածումը հանգեցնում է մի շարք այլ ֆինանսական ընկերությունների ձախողմանը՝ այլ վճարային համակարգերի միջոցով բանկերի միջև եղած կապերի և միջբանկային շուկայի պատճառով:
Հնարավոր են վարակման երկու տարբեր մեխանիզմներ.

- Վարակման ռիսկ, որը բխում է միջբանկային շուկայում բանկերի միջև եղած ուղիղ կապերից կամ վճարային համակարգերից,
- Վարակման ռիսկ, որը բխում է բանկերի միջև հաշվեկշռային անուղղակի կապերից, որոնք ծագում են դրանց պորտֆելների փոխկապակցվածությունից:

Ռիսկի առաջին տեսակը ավելի ցածր է, երբ բանկերը ավելի լավ և հավասարաչափ են փոխկապակցված, քանի որ մի բանկի կորուստները պորտֆելում փոխանցվում է մի շարք այլ բանկերի միջբանկային համաձայնագրերի միջոցով:

Վարակման երկրորդ աղբյուրը բխում է բանկերի միջև հաշվեկշռային անուղղակի կապերից, որոնք ծագում են դրանց պորտֆելների փոխկապակցվածությունից: Երբ բանկը ստիպված է տեղաբաշխել իր պորտֆելը կամ վաճառել որոշ ակտիվներ ի պատասխան ֆինանսական ցնցման, այլ բանկերի պորտֆելները ևս ազդեցության են ենթարկվում: Այս հանգամանքը կարող է հանգեցնել համակարգային ճգնաժամի օրինակ

ակտիվների գնի փոփոխության արդյունքում:

Այսինքն, ի տարբերություն ծառայությունների այլ ոլորտների, որտեղ որևէ մասնակցի անհաջողությունը նրա մրցակիցների համար նոր հնարավորություններ է ստեղծում, ֆինանսական կազմակերպության անհաջողությունը կարող է համակարգային խնդիրներ առաջացնել:

Հայաստանի ֆինանսական համակարգում նույնպես մրցակցության իրավունքի կիրառման ընթացքում ծառացած մի շարք գործնական խնդիրներ, ինչպես նաև ֆինանսական ոլորտում որոշակի ծառայությունների օրենսդրորեն (ԱՊՊԱ) կամ գործնականում պարտադիր դառնալու հանգամանքը նույնպես ազդակ հանդիսացան սույն հայեցակարգի մշակման համար:

1.3 Ֆինանսական համակարգի կայունությունը և մրցակցությունը

Մրցակցությունը ֆինանսական ոլորտում միշտ դիտարկվել է որոշակի վերապահումներով և երկար ժամանակ ոլորտում մրցակցության կանոնների կիրառումը խիստ կարգավորումների և սահմանափակումների առարկա է հանդիսացել: Եթե վերջին մոտ քսան տարիների ընթացքում մրցակցության քաղաքականությունը համեմատաբար արդյունավետ էր կիրառվում ֆինանսական ոլորտում, ներկայիս ճգնաժամը նորից անդրադառնում է այս ոլորտում մրցակցության քաղաքականության ունեցած դերին: Առաջանում են հարցեր, թե արդյոք ընդհանրապես մրցակցությունը ցանկալի է համակարգային ճգնաժամների ընթացքում և ինչպես սահմանափակել դրա կիրառման բացասական հետևանքները միջին ժամկետում և երկարաժամկետում:

Մրցակցության քաղաքականությունը միշտ շատ զգուշորեն է կիրառվել բանկային ոլորտում: ԱՄՆ-ում, օրինակ բանկային ոլորտում հակամրցակցային օրենսդրությունը չէր կիրառվում մինչև 1963 և 1964 թվականները: Մինչև այսօր ֆինանսական կազմակերպությունները

մրցակցության քաղաքականության կիրառման տեսանկյունից ենթարկվում են տարբերակված վերաբերմունքի այլ ոլորտների կազմակերպությունների համեմատությամբ:

Եվրոպայում Հանձնաժողովը չէր կիրառում արդար մրցակցության վերաբերյալ Հռոմի պայմանագրի 85 և 86 հոդվածները ֆինանսական ոլորտում մինչև Zuchner-ի մասին գործը 1980 թվականների սկզբին, քանի որ բանկային ոլորտը այդ ժամանակ էլ դիտարկվում էր որպես առանձնահատուկ ոլորտ: Բանկային գործունեությունը ենթարկվում էր անդամ պետությունների իրավասու մարմինների՝ մասնավորապես Կենտրոնական բանկերի և ֆինանսական ոլորտի վերահսկողների դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունների մեծ ազդեցությանը, և ոչ թե մրցակցության համար պատասխանատու մարմինների քաղաքականությանը:

Ներկայիս քննարկումները կրկին հանգեցնում են այն եզրակացությանը, որ ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցային քաղաքականության կիրառությունը վերստին քննարկման առարկա է: Կարծիք կա նույնիսկ կասեցնել մրցակցային քաղաքականության կիրառությունը ֆինանսական ճգնաժամի պայմաններում: Ավելին, դեռևս մինչև ճգնաժամը, 2002 թվականին արդեն հնարավոր էր համարվում ֆինանսական կազմակերպություններին ամբողջությամբ հանել հակամրցակցային օրենսդրության կիրառման շրջանակներից, հաշվի առնելով ֆինանսական համակարգի կայունության ապահովման խնդիրը և ոլորտի <առանձնահատուկ բնույթը>:

Որոշ պաշտոնական զեկույցներ որպես ներկայիս ճգնաժամի պատճառ դիտարկել են բանկային ոլորտում ուժեղ մրցակցության առկայությունը, ինչի պայմաններում ֆինանսական կազմակերպությունները ստիպված են եղել անընդհատ նորարություններ ներմուծել ու դրա արդյունքում չարդարացված ռիսկեր ստանձնել՝ իրենց մրցակիցներից ավելի հաջողակ լինելու համար:

Եթե որոշ ոլորտներում պետական քաղաքականությունը և/կամ հանրային շահը ենթադրում են առավել գերակա սկզբունքներ, ապա անհրաժեշտ է առնվազն հստակեցնել, թե

- որքանով մրցակցության կարգավորումը պետք է ենթարկվի այդ գերակա սկզբունքներին, և
- որն է դրա իրավաչափ ու ողջամիտ հիմնավորումը:

Ֆինանսական ծառայությունների ոլորտում պետության քաղաքականությունը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝

- Ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և ապահովությունը, և
- Ապահովել պատշաճ որակի ֆինանսական ծառայությունների մատուցումը:

Դրանց հասնելու համար գոյություն ունեն երկու հիմնական գործիքներ՝

- Պրուդենցիալ վերահսկողությունը, որը պետք է կանխի ֆինանսական կազմակերպությունների կողմից չարդարացված ռիսկերի ստանձնումը,
- Մրցակցության կարգավորումը, որը նպատակ ունի դրդել մրցակցող ֆինանսական կազմակերպություններին բարելավել իրենց մատուցած ծառայությունների որակը, նվազեցնել գինը, նորարարություններ ներմուծել, դրանով իսկ ավելի արդյունավետ կատարելով տնտեսության <ֆինանսավորողի> իրենց դերը, նպաստելով տնտեսական զարգացմանը:

Այսինքն, գոյություն ունեցող միջազգային լավագույն փորձը որպես ֆինանսական համակարգում հակամրցակցային օրենսդրության կիրառման բացառություն է սահմանում մրցակցության հետ կապված ցանկացած խնդիր, ֆինանսական համակարգի կայունության ապահովման առավել գերակա նպատակի (շահի) ներքո դիտարկելու կանոնը:

Ինչ վերաբերում է ազատ մրցակցության հնարավոր բացասական հետևանքներին, ապա ենթադրվում է, որ ֆինանսական համակարգի կարգավորումն ու վերահսկողությունը (պրուդենցիալ վերահսկողությունը) պետք է լինեն առավելագույնս փոխկապակցված ու միմյանց լրացնող, որպեսզի վերահսկողության ու կարգավորման միջոցով հավասարակշռվեն մրցակցության արդյունքում ֆինանսական կազմակերպությունների ստանձնելիք հնարավոր ռիսկերը:

ՄԱՍ 2. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

ԵՄ մրցակցության հիմնարար կանոնները, որոնք ամրագրված են ԵՄ հիմնադիր համաձայնագրի 101 և 102 հոդվածներում, կիրառվում են տնտեսության բոլոր ոլորտների, այդ թվում և ֆինանսական ծառայությունների ոլորտի նկատմամբ: Միևնույն ժամանակ, ֆինանսական ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները պարտադիր կերպով հաշվի են առնվում ընդհանուր կանոնների կիրառման կոնկրետ ընթացակարգեր ու մեթոդոլոգիա սահմանելու ընթացքում:

ԵՄ մրցակցության իրավունքը բաղկացած է 4 հիմնասյուներից՝

- Հակամրցակցային համաձայնագրեր և կարտելներ (հոդված 101),
- Գերիշխող դիրքի չարաշահում (հոդված 102),
- Համակենտրոնացումներ, միացումներ (Միացումների մասին Կանոնակարգ 139/2004)
- Պետական օգնություն (հոդված 106, 107):

2.1. Հակամրցակցային համաձայնագրեր և կարտելներ

2.1.1. Հակամրցակցային համաձայնագրերի հասկացությունը, դրանց բնորոշ նշանները

ԵՄ հիմնադիր համաձայնագրի 101 հոդվածի 1-ին, 2-րդ կետերն արգելում են անձանց միջև կնքված համաձայնագրերը, նրանց այն որոշումները և/կամ համաձայնեցված գործողությունները, որոնց նպատակը մրցակցության կանխումը, սահմանափակումը կամ արգելումն է, որոնք մասնավորապես՝

- Ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆիքսում են առուվաճառքի գներ կամ առևտրային այլ պայմաններ,
- Սահմանափակում կամ վերահսկում են արտադրության ծավալները,

շուկաները, տեխնիկական զարգացումը կամ ներդրումները,

- Բաժանում են շուկաները կամ մատակարարման աղբյուրները,
- Կիրառում են անհավասար պայմաններ այլ կողմերի հետ համարժեք գործարքների նկատմամբ՝ դրանով վերջիններիս համար ստեղծելով մրցակցային անբարենպաստ պայմաններ,
- Հանգեցնում են համաձայնագրերի կնքմանը, որոնք այլ կողմերի վրա դնում են լրացուցիչ պարտավորություններ, որոնք իրենց բնույթով և առևտրային նպատակով օգտագործման տեսանկյունից կապված չեն այդ պայմանագրերի առարկայի հետ:

Հակամրցակցային համաձայնություններից ամենածանր ազդեցությունը ունեն կարտելները, որոնց մասնակիցների համար սահմանված է առավել խիստ պատասխանատվություն:

Կարտելը ինչպես և այլ հակամրցակցային համաձայնությունը, ըստ էության, միմյանց հետ չմրցելու մասին կողմերի կնքած համաձայնությունն է, սակայն տվյալ դեպքում կողմերը պետք է հանդիսանան ուղղակի մրցակիցներ՝ գործեն նույն ապրանքային շուկայում, մատուցեն նույն ծառայությունները և այլն:

Հակամրցակցային համաձայնագրերը, որոնք կնքվում են այն անձանց միջև, որոնք ուղղակիորեն մրցակիցներ չեն հանդիսանում, բայց առնչվում են միմյանց գործունեության ոլորտով (օրինակ կարող է հանդիսանալ արտադրողի և մատակարարի, մատակարարի և վաճառողի միջև կնքված համաձայնագրերը) որպես կարտել չեն որակվում: Ընդ որում, հակամրցակցային համաձայնագրերը կարող են կնքվել այլ նպատակով, քան մրցակցության խախտումը, բայց այնուամենայնիվ ՝ գործունեության ընթացքում խախտում են մրցակցության պաշտպանության օրենսդրությունը:

Ազատ մրցակցության համար առավել <վնասակար են> հակամրցակցային համաձայնությունները, որոնց նպատակն է՝

- Գների ֆիքսումը,

- Շուկայի բաժանումը՝ շուկայի տարածքային բաժանում կամ սպառողների խմբերի տարանջատում, ինչը կարող է հանգեցնել նաև շուկայի մատչելիության սահմանափակման
- Արտադրանքի սահմանափակումը՝ ապրանքի կամ ծառայությունների վերահսկում՝ շուկայում բարձր գների պահպանման նպատակով:

Գների ֆիքսման համաձայնագրերը (կարտելները) կարող են տարբեր նպատակներ հետապնդել, մասնավորապես՝ համաձայնագրերի (կարտելների) մասնակիցները կարող են համաձայնության գալ զեղչերի, սահմանաչափերի, գների բարձրացման կամ նվազագույն գների մասին:

Գների ֆիքսման նշաններն են՝

- Մրցակիցների միջև գաղտնի կամ կարևոր տեղեկատվության փոխանակման նշաններ,
- Ցանկացած նախանշան, որ որևէ ապրանքի երկու կամ ավելի վաճառողներ համաձայնել են նույն եղանակով գնահատել կամ զեղչել իրենց ապրանք,
- Նույնատեսակ ապրանքների գինը փոփոխվում է մի շարք վաճառողների կողմից,
- Գնային փոփոխությունները ժամանակի ընթացքում տեղի են ունենում կանոնավոր և միատեսակ:
- Գնային փոփոխությունների կապակցությամբ տրվում են միատեսակ բացատրություններ:

Շուկայի բաժանման նշաններն են՝

- Ցանկացած նախանշան, որ միևնույն ապրանքի երկու կամ ավելի վաճառողներ պայմանավորվել են չվաճառել ապրանքը մրցակցի հաճախորդներին,
- Ցանկացած արտահայտություն այն մասին, որ համապատասխան տարածքը մրցակցի տարածքը չէ և այլն:

2.1.2. Հակամրցակցային համաձայնությունների (Կարտելների) բացահայտումը: Հանդուրժողականության քաղաքականություն՝ “Leniency

policy”

Հակամրցակցային համաձայնությունների (Կարտելների) Կարտելների բացահայտման գործընթացը համարվում է խրթին և դժվար կիրառելի, իսկ դրանց արդյունքում ձեռք բերված արդյունքները հաճախ՝ ոչ վստահելի: Մինչև այժմ կարտելների մեծամասնությունը բացահայտվել է բողոքների կամ «հանդուրժողականության» քաղաքականության շնորհիվ, որը հանդիսանում է հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի ոլորտում վերջին տարիների նշանակալից ձեռքբերումը: Այն առաջին անգամ ներդրվել է ԱՄՆ-ում և հետագայում լայն տարածում է գտել ԵՄ երկրներում:

«Հանդուրժողականության» քաղաքականությունը խրախուսում է հակամրցակցային համաձայնության մասնակցին խոստովանել իր մասնակցությունը հակամրցակցային համաձայնությանը և բացահայտել իր գործընկերներին՝ ուղղակի ապացույցներ ներկայացնելով ապօրինի գործունեության վերաբերյալ՝ դրա դիմաց ազատվելով հակամրցակցային համաձայնության համար նախատեսված պատասխանատվությունից:
Ներկայումս տարբեր երկրներում մշակվում են հանդուրժողականության քաղաքականության տարբեր ծրագրեր, որոնք կարող են գրավիչ դառնալ հակամրցակցային համաձայնության մասնակիցների համար:
Այս առումով նաև անհրաժեշտ է որպեսզի Հակամրցակցային համաձայնությունների ու մասնավորապես Կարտելների համար սահմանվեն պատասխանատվության համաչափ ու խիստ միջոցներ, որպեսզի համաձայնության մասնակիցները շահագրգռված լինեն օգտվելու Հանդուրժողականության քաղաքականության ընձեռած հնարավորությունից:

ԵՄ ոլորտում կարտելների բացահայտումը իրականացնում է Հանձնաժողովը: Ի դեպ կարևոր նշանակություն ունի ստուգումների միջոցով կարտելների բացահայտումը: Անսպասելի ստուգումները հանդիսանում են շատ արդյունավետ եղանակ անհրաժեշտ տվյալների ձեռքբերման և կարտելների պատասխանատվության ենթարկելու համար: Այդ ստուգումների իրականացման իրավական հիմքը սահմանվում է 1/2003 կանոնակարգով, որը սահմանում է ստուգումների իրականացման ընթացակարգը, ստուգողի

իրավասությունները և այլն:

Որպես կանոն ստուգումները սկսվում են որոշակի տեղեկատվության առկայության դեպքում, ինչի աղբյուրներ կարող են լինել օրինակ՝

- Հակամրցակցային համաձայնության և/կամ կարտելի մասնակիցների կողմից հանդուրժողականության ծրագրի իրականացման շրջանակներում տրամադրված տեղեկատվությունը,
- հակամրցակցային համաձայնության կողմ ընկերության նախկին աշխատակիցների կողմից տրամադրված տեղեկատվությունը,
- մրցակիցների և սպառողների տրամադրած տեղեկատվությունը եթե նույնիսկ այն ոչ բավարար հստակ ու սպառիչ է, և այլ:

2.2. Գերիշխող դիրքի չարաշահում

ԵՄ հիմնադիր համաձայնագրի 102-րդ հոդվածի համաձայն արգելվում է մեկ կամ մի քանի սուբյեկտների կողմից ներքին շուկայում կամ վերջինիս էական հատվածում գերիշխող դիրքի չարաշահումը, քանի դեռ այն կարող է ազդեցություն ունենալ անդամ երկրների միջև իրականացվող առևտրի վրա:

Չարաշահում է համարվում՝

- Ուղղակի կամ անուղղակի եղանակով ձեռքբերման կամ իրացման գների կամ առևտրի այլ խտրական կանոնների սահմանումը.
- Ի վնաս սպառողների շահերի արտադրության, շուկաների, տեխնիկական զարգացումների սահմանափակումը.
- Այլ տնտեսվարող սուբյեկտների համար միևնույն գործարքների համար անհավասար պայմանների սահմանումը՝ դրանով իսկ ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ.
- Պայմանագրի կնքումը պայմանավորել լրացուցիչ պարտավորությունների սահմանմամբ, որոնք իրենց բնույթով չեն

առնչվում պայմանագրի առարկային:

2.2.1 Տնտեսվարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի չարաշահում արձանագրելու քայլերը

Սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի չարաշահում արձանագրելու համար իրականացվում են հետևյալ գործողությունները՝

- Համապատասխան ապրանքային շուկայի սահմանում.
- Սուբյեկտի՝ իրավասու շուկայում գերիշխող դիրքի (ունի մենաշնորհ շուկայում, ունի էական շուկայական իշխանություն) գնահատում.
- Գերիշխող դիրք (մենաշնորհ, էական շուկայական ազդեցություն) ունեցող սուբյեկտի կողմից օրենքով արգելված գործողությունների իրականացում.

Գերիշխող դիրքի չարաշահում արձանագրելու համար նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել համապատասխան շուկան, ընդ որում սահմանվում է թե ապրանքային, թե աշխարհագրական շուկաները:

ԵՄ Հանձնաժողովը ընդունել է ուղեցույց, որը վերաբերում ապրանքային շուկայի՝ համապատասխան ապրանքային և աշխարհագրական շուկաների սահմանմանը: Ուղեցույցը ոչ միայն տալիս է ապրանքային շուկայի որոշման հստակ չափանիշներ, այլ նաև սահմանում է ապրանքային շուկայի որոշման նպատակները՝ քաղաքականության մակարդակով: Ուղեցույցը մանրամասն մեթոդաբանություն է սահմանում՝ ինչպե՞ս է պետք որոշել ապրանքային համապատասխան շուկան, ի՞նչ չափանիշների հիման վրա, ի՞նչ քայլեր են պետք ձեռնարկել դրա համար և այլն: Ուղեցույցն անդրադառնում է նաև <առաջնային> ու <երկրորդային> ապրանքային շուկաների որոշման խնդրին, այսինքն այն ապրանքներին, որոնք միմյանց չեն փոխարինում սակայն փոխկապակցված են:

Ընդ որում ապրանքային շուկան որոշելը կարևոր է նաև շուկայի

մասնակիցների քանակը պարզելու համար, ինչը ևս կարևոր չափանիշ է գերիշխող դիրքի առկայության փաստը գնահատելու համար:

Ապրանքային շուկան որոշելուց հետո, գնահատվում է շուկայում սուբյեկտի դիրքը ըստ հետևյալ գործոնների՝

Ա. Սուբյեկտի՝ շուկայում ունեցած մասնաբաժինը

Մասնաբաժինը որոշելը հանդիսանում է վերջինիս գերիշխող դիրքը սահմանելու համար կարևորագույն գործոն: Որպես կանոն օրենսդրությամբ սահմանվում են սահմանաչափեր, որոնց հավասար կամ ավել մասնաբաժնի առկայությունը չափանիշ է գնահատելու սուբյեկտի՝ գերիշխող դիրքի առկայության հանգամանքը:

Ընդ որում տարբեր սահմանաչափերի առկայությունը պայմանավորված է տարբեր ապրանքային շուկաների կառուցվածքով և առանձնահատկություններով:

Մասնաբաժնի հաշվարկման համար կիրառվում են համապատասխան բանաձևեր, օրինակ՝ «Համապատասխան շուկայում սուբյեկտի շուկայական դիրքի գնահատման մեթոդաբանության» հիման վրա սուբյեկտի շուկայական իշխանությունը գնահատվում է բանաձևի հիման վրա, ընդ որում բանկերի և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների դեպքում բանաձևի հիմքում հաշվարկվում է վերջիններիս հաշվապահական հաշվեկշիռը, իսկ ապահովագրական ընկերությունների դեպքում՝ ապահովագրավճարների ընդհանուր գումարը:

Մասնաբաժինը հաշվարկվում է նաև ներդրումային ծառայությունների միջնորդների համար՝ կնքված գործարքների ընդհանուր արժեքի և ծավալի միջոցով, խորհրդատվական ծառայությունների քանակով, ներդրումային պորտֆելների կառավարման քանակով, արժեթղթերի թողարկման քանակով: Ներդրումային ընկերությունների դեպքում՝ իրենց կողմից իրականացված ներդրումների քանակով:

Բ. Շուկա մուտք գործելու պայմանները

Գերիշխող դիրքի առկայության փաստը գնահատելու համար կարևոր է որոշել, արդյոք կան իրավական և/կամ տնտեսական բնույթի խոչընդոտներ, որոնք կանխում կամ սահմանափակում են այլոց շուկա մուտք գործելը՝

- Զգալի կապիտալ ներդրումները
- Մուտքի համար անհրաժեշտ ժամանակահատվածը
- Լիցենզավորման համապատասխան ռեժիմի առկայությունը
- Հարկումից, գնանշումներից, վարկավորումից ծագող սահմանափակումները

Գ. Շուկայում սուբյեկտի ունեցած ազդեցության սահմանները

Շուկայում սուբյեկտի ազդեցությունը ենթադրում է գներ սահմանելու, մրցակցությունը վերացնելու և մյուս մրցակիցներից, սպառողներից և հաճախորդներից անկախ գործելու կարողությունը:

Շուկայում ազդեցությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

- Եկամտաբերությունը
- Մատուցվող ծառայությունների իրացվելիությունը
- Ֆինանսական անկախությունը

Գերիշխող դիրքի առկայության հանգամանքը գնահատելու համար կարևոր նշանակություն ունի նաև սուբյեկտի կողմից օրենսդրությամբ արգելված վարքագծի դրսևորումը. Օրենսդրությամբ սովորաբար սահմանվում է այն վարքագիծը, որը համարվում է ազատ տնտեսական մրցակցությունը խախտող կամ սահմանափակող:

Ընդունված մոտեցում է, երբ գերիշխող դիրքի չարաշահման փաստի առկայությունը պայմանավորվում է շուկայում սուբյեկտի էական իշխանություն

և/կամ ազդեցություն ունենալու հանգամանքով:

Ի կատարումն ԵՄ հիմնադիր համաձայնագրի, ինչպես նաև մրցակցությունը կարգավորող այլ ԵՄ ակտերի. Անդամ երկրները որպես կանոն ընդունում են ուղեցույցեր, որոնք նախատեսում են գերիշխող դիրքի որոշման, ինչպես նաև գերիշխող դիրքի չարաշահման գնահատման մանրամասն ընթացակարգն ու մեթոդաբանությունը: Ուղեցույցերը ի լրումն գերիշխող դիրքի և դրա չարաշահման գնահատման համար անհրաժեշտ վերը նշված տարրերի, անդրադառնում են նաև այնպիսի խնդիրների, ինչպիսիք են կոլեկտիվ գերիշխող դիրքը, գերիշխող դիրքի կոլեկտիվ չարաշահումը, գնորդի ազդեցությունը շուկայում մրցակցող անձանց դիրքի վրա և այլն:

Եվ վերջապես, գերիշխող դիրքի չարաշահման մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ, որ չարաշահումը կարող է տեղի ունենալ ոչ թե այն շուկայում որտեղ անձը գերիշխող դիրք է գրավում, այլ մեկ այլ, սակայն դրան սերտորեն փոխկապակցված շուկայում:

2.3 Համակենտրոնացումներ (միացումներ)

Համակենտրոնացումները ԵՄ մակարդակում կարգավորվում են Խորհրդի 139/2004 ընկերությունների համակենտրոնացումների հսկողության մասին կանոնակարգով:

Կանոնակարգը սահմանում է համակենտրոնացումների հասկացությունը և այն սահմանաչափերը, որի դեպքում նախ՝ համակենտրոնացումը հանդիսանում է համայնքային մակարդակի, և ապա՝ ենթակա է հայտարարագրման:

2.3.1 Հասույթը՝ որպես համակենտրոնացումների հայտարարարման սահմանաչափի չափանիշ

ԵՄ և ԵՄ անդամ պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է

տալիս, որ համակենտրոնացումների հայտարարագրման սահմանաչափի որոշման հիմքում ընկած է միայն տարեկան հասույթը: Մասնավորապես՝ միացումների մասին կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանվում է հասույթի հաշվարկման եղանակը

Ընդհանուր հասույթը ներառում է ընկերության կողմից նախորդ ֆինանսական տարվա ընթացքում ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից ստացված գումարները, որից նվազեցվում է վաճառքի զեղչերը, ԱԱՀ-ն և այլ հարկեր, որոնք ուղղակիորեն առնչվում են հասույթին:

Կանոնակարգը հատուկ կարգավորում է ֆինանսական կազմակերպությունների հասույթի հաշվման եղանակը:

Մասնավորապես՝ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հասույթը հաշվվում է

- Տոկոսների կամ այլ նմանատիպ եկամտից, արժեթղթերից բխող եկամտից,
- Եկամուտ փոխկապակցված ընկերությունների բաժնետոմսերից,
- Ֆինանսական գործառնություններից բխող զուտ եկամուտ և այլն :

Համակենտրոնացումների որոշման տեսանկյունից հետաքրքրական է նաև ԱՄՆ-ի փորձը: Մասնավորապես, համակենտրոնացումները ԱՄՆ-ում որոշվում են **Herfindahl–Hirschman Index-ի վրա,** այսուհետ՝ **HHI:** Այս ցուցանիշը լայնորեն կիրառվում է մրցակցային իրավունքում՝ շուկայի համակենտրոնացվածության հաշվարկման, ինչպես նաև ընկերությունների միջև մրցակցության հաշվարկման և գնահատման նպատակով:

Այն հաշվարկվում է հետևյան եղանակով՝

- Առաջին հերթին անհրաժեշտ է որոշել շուկայում ընկերությունների քանակը,
- Հաշվել յուրաքանչյուր ընկերության շուկայական մասնաբաժինը,որը իրենից ներկայացնում է ընկերության՝ տվյալ շուկայում ունեցած վաճառքը տվյալ շուկայում ամբողջ վաճառքի հարաբերությանը,

- Հաշվել յուրաքանչյուր ընկերության շուկայական մասնաբաժնի քառակուսին,
- Գումարել բոլոր ընկերությունների մասնաբաժինների քառակուսիները, որն էլ իրենից ներկայացնում է HHI-ը:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում ԱՄՆ Արդարադատության վարչությունը ըստ HHI ինդեքսի տարանջատում է շուկայի կենտրոնացվածության 3 մակարդակ և համապատասխանաբար՝ որոշում է ընկերությունների միացման հարցը:

- *Չկենտրոնացված* – երբ տվյալ շուկայում HHI-ը 1000-ից ցածր է.այս դեպքում ընկերությունների միացումը խնդրահարույց չի համարվում,
- *Չափավոր կենտրոնացված*– երբ տվյալ շուկայում HHI -ը տատանվում է 1000-1800-ն ընկած տիրույթում.այս պարագայում Արդարադատության վարչությունը մանրամասնորեն գնահատում է՝ ինչ հակամրցակցային հետևանքների կարող է հանգեցնել տվյալ միացումը,
- *Բարձր կենտրոնացված*- երբ տվյալ շուկայում HHI-ը գերազանցում է 1800-ը.այս դեպքում յուրաքանչյուր գործարք, որը բարձր կենտրոնացված շուկայում ավելացնում է HHI-ը ավելի քան 100 միավորով, հանդիսանում լուրջ հակամրցակցային ազդակ:

2.4 Տնտեսական մրցակցության կանոններից բացառությունները

Ինչպես արդեն նշել ենք, ֆինանսական ոլորտի մրցակցային իրավունքի դրույթերի կիրառությունը պետք է դիտարկել ֆինանսական կայունության լույսի ներքո: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սահմանել դեպքեր, որոնք չնայած իրենց հատկություններով համապատասխանում են հակամրցակային համաձայնությունների կամ այլ կերպ մրցակցությունը սահմանափակելու վարքագծին, սակայն ընկնում են մրցակցության իրավունքի դրույթների կիրառման բացառությունների տակ: Այս գաղափարն ամրագրված է ԵՄ մրցակցային իրավունքում, մասնավորապես ԵՄ Հիմնադիր

համաձայնագրի 101 հոդվածի 3-րդ մասով :

Վերևում արդեն նշվել է, որ մրցակցության կանոնների կիրառումից բացառությունները «արդարացված են» երբ գոյություն ունի ավելի գերակա հանրային շահ, ինչպիսին է նաև ֆինանսական համակարգի կայունությունը կամ զարգացումը: Այդպիսի գերակա շահի օրինակ կարող է լինել այն հարցը արդյոք ուժեղ մրցակցության առկայությունն ինքնին հանգեցնելու է շուկայի զարգացմանը ու մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Օրինակ կարելի է պնդել, որ գերակա շահը հենց ուժեղ մրցակցային շուկայի առկայությունն է. եթե կա ազատ և ուժեղ մրցակցություն, շուկան կզարգանա (այս մոտեցումը ավելի շատ բնորոշ է մրցակցության կարգավորման ԱՄՆ մոդելին):

Միևնույն ժամանակ Եվրոպական միությունը որպես գերակա շահ դիտարկում է կայուն ու անվտանգ շուկան, ծառայությունների զարգացումը:

Այս առումով ի շահ այդ գերակա նպատակների կարելի է ընդունելի համարել մրցակցային կանոնների կիրառման բացառությունների սահմանումը, օրինակ՝

- երբեմն ֆինանսական շուկայի կայունության ապահովման տեսանկյունից առավել նպատակահարմար է, որ ֆինանսական կազմակերպությունները իրենց ջանքերն ուղղեն ոչ թե միմյանց հետ մրցակցելուն, այլ համատեղ գործեն՝ շուկան զարգացնելու նպատակով: Ակնհայտ է, որ եթե հաշվի չառնենք շուկայի զարգացման գերակա շահը,ապա կարող ենք խոսել հակամրցակցային համաձայնության մասին, կամ
- երբեմն շուկայի զարգացման կամ ծառայությունների որակի բարելավման, կամ համակարգի կայունացման նպատակով կարելի է թույլատրել մի ֆինանսական կազմակերպության կողմից մեկ այլ կազմակերպության ձեռք բերումը՝ որպես <ընդունելի> համակենտրոնացում, կամ
- երբեմն որոշակի նոր ապրանքներ կամ ծառայությունների նոր տեսակներ ներդնելու նպատակով ֆինանսական

կազմակերպությունների համատեղ գործունեությունն ու համագործակցությունը, այդ թվում՝ համաձայնությունները, չդիտարկվեն որպես ազատ մրցակցության կանոնների խախտում՝ կրկին հաշվի առնելով շուկայի զարգացման և/կամ համակարգի կայունության ապահովման գերակա շահը:

ԵՄ շրջանակներում մրցակցությունը սահմանափակող վարքագծի բացառությունների ոլորտը համապարփակ կարգավորված է, մասնավորապես ընդունվել են մի շարք կանոնակարգեր, «հետազոտության և զարգացման, ինչպես նաև մասնագիտացմանն ուղղված համաձայնագրերը մեխանիկորեն թույլատրելու, ապահովագրության ոլորտում կնքված համաձայնագրերի նկատմամբ 101 հոդվածի 3-րդ դրույթի կիրառման վերաբերյալ, ինպես նաև մի շարք ուղեցույցներ, որոնցից է հորիզոնական համաձայնությունների նկատմամբ 101 հոդվածի կիրառմանն ուղղված ուղեցույցը:

Բացառությունը կիրառելու համար իրականացվում է հետևյալ թեստը.

- Նախ՝ գնահատվում է՝ արդոք առկա է վարքագիծ, ընկերությունների միջև կնքված պայմանագիր, որը կարող են ունենալ մրցակցությունը խախտելու նպատակ, կամ կարող է սահմանափակել մրցակցությունը ներկայումս կամ ապագայում, եթե այո,
- Որոշվում է՝ արդյոք առկա են բացառությունների կիրառման 4 պայմաններ, որոնք կիրառվում են բացառապես գումարային հիմքով՝
    - Վարքագիծը կամ համաձայնությունը պետք է նպաստի ապրանքի (ծառայությունների) արտադրությանը և մատակարարմանը կամ նպաստի տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին,
    - Սահմանափակումները պարտադիր են այդ արդյունքներին հասնելու համար,
    - Սպառողները պետք է օգուտ ստանան այդ վարքագծի և համաձայնությունների արդյունքում, այսինքն՝ միայն կողմերի օգուտները բավարար չեն մրցակցության սահմանափակումները

արդարացնելու նպատակով,

- Վարքագիծը և համաձայնությունը չպետք է հնարավորություն ընձեռնի կողմերին վերացնելու մրցակցությունը տվյալ ապրանքային շուկայում:

Ընդ որում մրցակցության կանոններից բացառության կիրառման համար անհրաժեշտ վերը թվարկված հանգամանքների առկայությունը ապացուցելու պարտավորությունը կրում են ընկերությունները:

2.4.1. Բացառությունը Հետազոտությունների և զարգացման համաձայնագրերի համար

Հետազոտությունների և զարգացման համաձայնագրեր դասվում են այն համաձայնագրերի շարքին, որ կարող են կնքվել տնտեսության բոլոր ճյուղերում և արդիական հատկապես ֆինանսական ծառայությունների ոլորտում :

Դրանք ուղղված են համաձայնագրի կողմերի՝ կոնկրետ գործունեության ոլորտում հետազոտությունների և զարգացման համատեղ աշխատանքի իրականացմանը:

Հետազոտական աշխատանքի համատեղ իրականացումը, ինչպես նաև հետազոտության արդյունքների համատեղ զարգացումը, որպես կանոն ազատվում են հակամրցակցային կանոնների կիրառումից (101(1)), եթե դրանք համապատասխանում են 101(3)-ով նախատեսված բացառություններին: Ամեն դեպքում պետք է որոշվի արդյոք այդ համաձայնագրերը բարենպաստ արդյունքներ են ստեղծում նաև սպառողի համար՝ վերջինիս հնարավորություն տալով օգտվելու նոր կամ առավել զարգացած ծառայություններից կամ պրոդուկտներից, ինչպես նաև հետազոտության կամ զարգացման արդյունքում առաջ եկած գների իջեցումից:
ԵՄ Կանոնակարգով սահմանվում է պայմանագրերի կողմերի շուկայի մասնաբաժնի սահմանաչափը :
Համատեղ հետազոտման և զարգացման համաձայնագրերի պարագայում կողմերի գումարային շուկայական մասնաբաժինը չպետք է գերազանցի 25%-ը: Վերևում նշված բացառությունը կիրառելի է այս համաձայնությունների

նկատմամբ, քանի դեռ նշված սահմանաչափը (25%) չի ավելացել:

2.4.2.Մասնագիտացման համաձայնագրերի ազատումը

Մասնագիտացման համաձայնագրերը ևս կարող են լայն կիրառություն ունենալ ֆինանսական ընկերությունների համար:
Դրանց նկատմամբ բացառությունների կիրառումը հնարավորություն է ընձեռում թեթևացնել վարչական վերահսկողությունը:
Մասնագիտացման համաձայնագրերը նպաստում են ապրանքների և ծառայությունների որակի բարձրացմանը: Կողմերը, մասնագիտանալով այս կամ այն ոլորտում, կարողանում են առավել արդյունավետ իրականացնել ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումը, և հետևաբար դրանց համար սահմանում են ավելի ցածր գին, ինչից շահում է նաև սպառողը:

Մասնագիտացման համաձայնագրերը տարանջատվում են 3 խմբի՝

- *Միակողմանի մասնագիտացման համաձայնագիր*- համաձայնագիր՝ կնքված երկու՝ միևնույն ապրանքային շուկայում ակտիվ կողմերի միջև, որի ուժով կողմերից մեկը համաձայնում է լիովին կամ մասնակիորեն դադարեցնել որոշակի ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հրաժարվում է այդ ապրանքների արտադրությունից և ծառայությունների մատուցումից և համաձայնում է դրանք ձեռք բերել մյուս կողմից,
- *Փոխադարձ մասնագիտացման համաձայնագիր*- համաձայնագիր՝ կնքված երկու կամ ավելի՝ միևնույն ապրանքային շուկայում ակտիվ կողմերի միջև, որի ուժով կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս լիովին կամ մասնակիորեն դադարեցնել կամ ձեռնպահ մնալ

որոշակի, բայց տարբեր ապրանքների արտադրությունից և ծառայությունների մատուցումից, և համաձայնում են դրանք ձեռք բերել մյուս կողմից կամ կողմերից,

- *Համատեղ արտադրության համաձայնագիր* - համաձայնագիր, որի ուժով կողմերը համաձայնում են համատեղ արտադրել որոշակի ապրանքներ և մատուցել որոշակի ծառայություններ:

Մասնագիտացման համաձայնագրերի բացառությունները կիրառվում են, եթե դրանք չեն հետապնդում մրցակցությունը էապես խախտելու կամ վերացնելու նպատակ և երբ կողմերի՝ շուկայի համատեղ մասնաբաժինը չի գերազանցում 20 %-ը:

Շուկայի մասնաբաժինը հաշվարկվում է շուկայի վաճառքի ծավալի հիման վրա, սակայն եթե այդ տվյալները հասանելի չեն, կողմերի շուկայական մասնաբաժինը կարող է հաշվարկվել այլ վստահելի շուկայական տվյալների հիման վրա:

Այն դեպքում, երբ սահմանված սահմանաչափը որոշակի ժամանակ անց գերազանցում է 20 %-ը, սակայն ցածր է 25 %-ից, հակամրցակցային կանոնների կիրառման բացառությունը կիրառվում է ևս 2 տարի, իսկ 25 %-ը գերազանցելու դեպքում՝ միայն հաջորդող 1 տարվա ընթացքում:

Բացառությունը չի կիրառվում, եթե մասնագիտացման համաձայնագրերը ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված են՝

- Գների ֆիքսմանը,
- Արտադրության կամ վաճառքի սահմանափակմանը
- Շուկաների կամ սպառողների բաշխմանը:

2.4.3.Ապահովագրության ոլորտում որոշ համաձայնագրերի նկատմամբ բացառությունների կիրառումը

ԵՄ մակարդակով ֆինասական ընկերություններից միայն ապահովագրական ընկերությունների որոշակի համաձայնագրերի համար է նախատեսված տարբերակված մոտեցում՝ բացառությունների կիրառման առումով: Մյուս ոլորտների, մասնավորապես բանկային ոլորտի նկատմամբ միասնականորեն կիրառվում են մրցակցության իրավունքի դրույթները:

Կանոնակարգը սահմանում է նաև ապահովագական և վերաապահովագրական ընկերությունների խմբի կողմից յուրաքանչյուր ընկերության՝ տվյալ ապրաքային շուկայում ունեցած մասնաբաժնի սահմանաչափը և դրա հաշվարկման չափանիշները՝ պարգևավճարների համախառն եկամուտ (Gross premium income), ապահովագրված ռիսկի արժեք (insured risk value) և այլ:

Կանոնակարգը ապահովագրության ոլորտի մի շարք համաձայնագրերի նկատմամբ նախատեսում է բացառությունների կիրառման հնարավորություն: Այն մասնավորապես որոշակի պայմանների առկայության պարագայում կիրառվում ապահովագրության ոլորտում երկու կամ ավելի ընկերությունների միջև կնքված համաձայնագրերի նկատմամբ, որոնք առնչվում են

- **ռիսկերի հաշվարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության փոխանակմանը:**
- **որոշակի տեսակի ռիսկեր համատեղ կրելուն:**

Ռիսկերի հաշվարկման համար տեղեկատվության փոխանակումը առնչվում է նախկինում որոշակի ռիսկերի ծածկման գնի հաշվարկին, վիճակագրական տեղեկատվության միասնականացմանը և համապատասխան տեղեկատվական աղյուսակների կազմմանը, ինչպես նաև արդյունքների մասին համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը և արդյունքների բաշխմանը:

Կանոնակարգը վերը նշված երկու դեպքերի համար հստակ սահմանում է բացառությունների կիրառման պայմաններ: Մասնավորապես, որպեսզի նշված համաձայնագրերի նկատմամբ կիրառվող ազատման դրույթները միասնական տվյալները և աղյուսյակները պետք է՝

- հիմնված կոնկրետ ժամանակահատվածի միասնական տեղեկատվության վրա՝ վիճակագրական տվյալներ տրամադրեն
    - կոնկրետ ժամանակահատվածում հատուցումների քանակի վերաբերյալ,

- նշված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա ընթացքում ապահովագրված առանձնահատուկ ռիսկերի քանակի վերաբերյալ,
- նշված ժամանակահտվածում հատուցումների համար վճարված կամ վճարվելիք ամբողջ գումարի չափի վերաբերյալ,
- նշված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա ընթացքում ապահովագրված կապիտալի ամբողջ գումարի վերաբերյալ,

- ներառեն առկա վիճակագրության ձախողումները,
- չներառեն անկանխատեսելի տարրեր, պահուստային եկամուտ, վարչարարական կամ հարկային վճարներ և հաշվի չառնեն ներդրումներից խբող եկամուտը և ակնկալվող շահույթը:

Միասնական տվյալները, աղյուսակները և ուսումնասիրության արդյունքները պետք է՝

- չանհատականացնեն որևէ ապահովագրական ընկերության կամ ապահովագրված անձի,
- սահմանեն, որ դրանք պարտադիր բնույթ չունեն,
- չբացահայտեն ապահովագրավճարների մակարդակը,
- հասանելի լինեն ցանկացած ապահովագրական ընկերության համար վերջինիս խնդրանքով,
- հասանելի լինեն սպառողական կազմակերպությունների համար դրանում առկա տեղեկատվության չբացահայտման պայմանով:

Որոշակի տեսակի ռիսկեր համատեղ ծածկումը

Ինչպես արդեն նշվել է, կանոնակարգը որոշակի պայմանների առկայության պարագայում կիրառվում ապահովագրության ոլորտում երկու կամ ավելի ընկերությունների միջև կնքված համաձայնագրերի նկատմամբ, որոնք առնչվում են ապահովագրական և վերաապահովագրական

ընկերությունների կողմից համատեղ ֆոնդի ստեղծմանը և օգտագործմանը՝ համաապահովագրության և համավերաապահովագրության ձևով որոշակի ռիսկերի համատեղ կրելու նպատակով:

Կանոնակարգը հետաքրքիր մեխանիզմ է սահմանում, համաձայն որի ազատումը կիրառելի է հատուկ նոր ռիսկերի ծածկման նպատակով համաապահովագրական և համավերաապահովագրական համատեղ ֆոնդի ստեղծման պահից 3 տարվա ընթացքում՝ անկախ համատեղ ֆոնդի շուկայի մասնաբաժնից:

Ինչ վերաբերում է համաապահովագրական և համավերաապահովագրական համատեղ ֆոնդին, որոնք չեն ստեղծվել հատուկ նոր ռիսկերի ծածկման նպատակով, ազատումը կկիրառվի այն դեպքում երբ մասնակից ընկերությունների շուկայի համատեղ մասնաբաժինը չի գերազանցում

- համապահովագրական համատեղ ֆոնդի պարագայում ցանկացած շուկայի 20%-ը,
- համավերաապահովագրական համատեղ ֆոնդի պարագայում՝ ցանկացած շուկայի 25%-ը,

Որպեսզի բացառությունը կիրառվի, պետք է ապահովվեն հետևյալ պայմանները

- Յուրաքանչյուր մասնակից ընկերություն իրավունք ունի դուրս գալ համատեղ ֆոնդից առանց պատժամիջոցների կիրառման՝ խելամիտ ժամկետում ծանուցում կատարելու հիման վրա,
- Մասնակից ընկերությունները համատեղ ֆոնդի կանոններով չպետք է պարտադրված լինեն իրականացնելու ապահովագրություն կամ վերաապահովագրություն ֆոնդի միջոցով,
- Համատեղ ֆոնդի կանոններով դրա կամ դրան մասնակցող ընկերությունների գործունեությունը աշխարհագրորեն սահմանափակ չէ,

- Համաձայնագիրը չի սահմանափակում արտադրությունը կամ վաճառքը.
- Համաձայնագիրը չի բաշխում շուկաները կամ սպառողներին,
- Համավերաապահովագրության համատեղ ֆոնդի մասնակիցները չեն համաձայնում այն առևտրային ապահովագրավճարներին, որոնք վերջիններս գանձում են ուղղակի ապահովագրության համար:

2.5 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցության կարգավորման վերաբերյալ դրույթներ պարունակվում են մի շարք օրենքներում:

Նախ <Կենտրոնական բանկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը սահմանում է ԿԲ-ի պարտավորությունը նպաստել ֆինանսական համակարգում ազատ տնտեսական մրցակցության պայմանների ստեղծմանը՝ ձեռնարկելով օրենքով նախատեսված միջոցները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների մի քանի հոդվածներ սահմանում են բանկերի, ապահովագրական ընկերությունների և վարկային կազմակերպությունների կողմից ինչպես *հակամրցակցային համաձայնությունների, այնպես էլ գերիշխող դիրքի հանգեցնող գործարքների կնքման արգելք, մասնավորապես*՝

- **«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված՝** որի համաձայն բանկերին արգելվում է այնպիսի գործարքներ կնքել, որոնք ուղղված են կամ հանգեցնում են բանկերի ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կամ որոնց հետևանքով բանկը, նրա հետ փոխկապակցված և համագործակցող անձինք ՀՀ բանկային շուկայում ձեռք են բերում

գերիշխող դիրք, որը նրանց հնարավորություն է տալիս կանխորոշելու ֆինանսական գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագներն ու պայմանները:

- **«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 83 հոդված,** որով Ընկերություններին արգելվում է այնպիսի գործարքներ կնքել, որոնք ուղղված են կամ հանգեցնում են Ընկերությունների միջև ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կամ որոնց հետևանքով Ընկերությունը, նրա հետ փոխկապակցված և համագործակցող անձինք ՀՀ ապահովագրական շուկայում ձեռք են բերում գերիշխող դիրք, կամ որը նրանց հնարավորություն է տալիս կանխորոշելու ապահովագրական գործունեության ոլորտի շուկայական սակագներն ու պայմանները: Բացի այդ տվյալ օրենքն ամրագրում է նաև **ապահովագրական պորտֆելի փոխանցման վերաբերյալ 126 հոդվածը, որի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն** Կենտրոնական բանկը մերժում է ապահովագրական պորտֆելի փոխանցման դիմումը, եթե դա կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը:

- **«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22.2.հոդվածի 5-րդ մասի դ** կետի համաձայն, ԿԲ-ն կարող է կարող է համաձայնություն չտալ վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ ներկայացված միջնորդագրին, եթե տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը:

Նույն օրենքների մի քանի հոդվածներ էլ կրկին միայն սահմանումների մակարդակով անդրադառնում են համակենտրոնացումների խնդրին՝ միացումների ու նշանակալից մասնակցության մասով, մասնավորապես՝

- **«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» և «է»** կետերը իրենց հերթին պարտավորեցնում են ՀՀ կենտրոնական բանկին մերժել բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնություն տալու դիմումը, եթե տվյալ

գործարքն ուղղված է, կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կամ տվյալ գործարքի հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք ՀՀ բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել ֆինանսական գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները:

- **«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով** սահմանվում է, որ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ բանկի միացման պայմանագրի կնքմանը, եթե միացման արդյունքում բանկը բանկային շուկայում ձեռք կբերի գերիշխող կամ մենաշնորհ դիրք:
- **«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով** ԿԲ խորհուրդը կարող է մերժել Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումը, եթե նշանակալից մասնակցության ձեռքբերման գործարքն ուղղված է կամ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Նույն օրենքի **130 հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով** սահմանվում է Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է համաձայնություն չտալ միացման պայմանագրի կնքմանը, եթե Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով միացման արդյունքում Ընկերությունը կամ Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձն ապահովագրական շուկայում ձեռք կբերի գերիշխող դիրք:
- **«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ե** կետով ևս սահմանվում է ԿԲ կողմից նշանակալից մասնակցության դիմումի մերժումը, եթե տվյալ գործարքը ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ

տնտեսական մրցակցության սահմանափակմանը:

Ըստ էության ոչ օրենքի ոչ էլ ենթաօրենսդրական ակտերի և ՀՀ ԿԲ որոշումների մակարդակով սահմանված չեն Կենտրոնական բանկին վերը թվարկված նորմերով վերապահված իրավասությունների իրականացման ընթացակարգն ու մեթոդաբանությունը, այն տրամաբանությամբ, ինչը նկարագրեց վերը՝ ԵՄ-ում մրցակցության կարգավորման ընդհանուր նկարագրությունում:

ՀՀ օրենսդրությունը չի անդրադառնում նաև մրցակցության կարգավորման կանոնների կիրառման բացառություններին, որոնք ներկայացվեցին սույն հայեցակարգի 2.4. բաժնում:

Հայաստանում մրցակցությունը կարգավորվում է նաև <Տնտեսական մրցակցության պահպանության մասին> ՀՀ օրենքով, ինչպես նաև ՏՄՊՊՀ-ի մի քանի որոշումներով, որոնք վերաբերում են ապրանքային շուկայի որոշման կարգին, համակենտրոնացումների սահմանաչափերին, գերիշխող դիրքի և գերիշխող դիրքի չարաշահմանը:

Այդ կարգավորումը ևս որոշ թերություններ ունի, որոնք մասնավորապես հետևյալն են՝

- Որպես կանոն կարգավորումները ու սահմանումները ունեն ընդհանուր բնույթ ու հաշվի չեն առնում ֆինանսական ոլորտի առանձնահատկությունները, օրինակ՝ համակենտրոնացումների սահմանաչափերի, համապատասխան ապրանքային շուկայի, շուկայում մասնակիցների չափաբաժնի և այլ հարցերով,
- Շատ դեպքերում հաշվի չեն առնվել նաև այս կամ այն կարգավորման համար ԵՄ ակտերով, ուղեցույցերով, մեկնաբանություններով կամ Եվրոպական Արդարադատության դատարանի որոշումներով սահմանված առանձնահատկությունները, օրինակ՝
    - Համապատասխան աշխարհագրական շուկայի որոշման ժամանակ կարևոր է այն հանգամանքը, որ տվյալ աշխարհագրական տարածքում մրցակցության պայմանները, այն է շուկայում իրավիճակը, մասնակիցների քանակը և այլն լինի նույնը, և տարբերվի այլ տարածքում առկա իրավիճակից,

- Չի կարգավորվում երկրորդային ապրանքային շուկայի խնդիրը
- Գերիշխող դիրքի և գերիշխող դիրքի չարաշահման խնդրի կապակցությամբ չի քննարկվում շուկայի վրա գնորդի ազդեցության հանգամանքը,
- Չեն քննարկվում կոլեկտիվ գերիշխող դիրքի կամ գերիշխող դիրքի կոլեկտիվ չարաշահման դեպքերը
- Չեն սահմանվում մրցակցության կանոնների կիրառման բացառությունները և այլն:

- Նույնիսկ այն պարագայում երբ կարգավորումներն առկա են, դրանք կրում են ընդհանուր բնույթ, այսինքն բացակայում է օրինակ՝ ապրանքային համապատասխան շուկայի որոշման համար անհրաժեշտ տարրերի, այդ տարրերից յուրաքանչյուրի գնահատման ընթացակարգի ու չափանիշների որոշման մանրամասն մեթոդաբանությունը:

ՄԱՍ 3. Առաջարկություններ

Վերը նկարագրվածից ակնհայտ է դառնում, որ ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցության իրավական կարգավորումը չի կարող լիարժեք համարվել միջազգային լավագույն փորձի տեսանկյունից:

Մրցակցության կարգավորման վերաբերող միայն մի քանի դրույթներ են սահմանված որոշ օրենքներում որոնք սահմանումների մակարդակում են գտնվում: Այս պարագայում ֆինանսական համակարգի կարգավորողը, ունենալով նաև մրցակցության խնդիրներով զբաղվող համապատասխան ստորաբաժանում, չունի բավարար իրավական դաշտ՝ միջազգային լավագույն փորձի ու մասնավորապես ԵՄ չափանիշների տեսանկյունից, արդյունավետ կարգավորում իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն, որ մրցակցության կարգավորումը ֆինանսական համակարգի կարգավորողի համար գործնականում հանդիսանում է և ֆինանսական համակարգի կայունության ապահովման կարևոր գործիք, ստորև ներկայացվում են առաջարկություններ կապված համապատասխան իրավական դաշտի ձևավորման հետ, ինչը թույլ կտա ապահովել մրցակցության կարգավորումը միջազգային լավագույն փորձի և մասնավորապես ԵՄ կանոններին համապատասխան:

Առաջարկվող իրավական ակտերը, որոնք պետք է ընդունվեն ներկայացված են ըստ մրցակցության կարգավորման հենասյուների՝ Հակամրցակցային համաձայնագրեր, Գերիշխող դիրքի չարաշահում, Համակենտրոնացումներ: Տարանջատված են նաև երկարաժամկետ ու կարճաժամկետ նպատակները՝

- երկարաժամկետ՝ որոնք հնարավոր է իրականացնել օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով
- կարճաժամկետ, որոնք հնարավոր է իրականացնել արդեն իսկ գործող օրենքներում ԿԲ-ին վերապահված իրավասությունների

շրջանակներում, և կարող են ընգրկվել ԿԲ համապատասխան ստորաբաժանումների մոտակա աշխատանքային ծրագրերում:

3.1 Համակենտրոնացումներ

Վերն արդեն նշել ենք ֆինանսական ոլորտը կարգավորող օրենքների այն դրույթները, որոնք ֆինանսական համակարգի կարգավորողին իրավասություն են վերապահում կարգավորել ֆինանսական կազմակերպությունների համակենտրոնացումները՝ նշանակալից մասնակցության և միացման դիմումները քննելու ու թույլտվություն և/կամ համաձայնություն տալու ընթացքում:

Այս առումով որպես կարճաժամկետ նպատակ, առաջարկվում է ընդունել՝

Իրավական ակտը	Իրավական հիմքը
Ֆինանսական կազմակերպությունների համար սահմանել համակենտրոնացման հայտարարագրման նպատակը (քաղաքականության մակարդակով) սահմանաչափերը և սահմանաչափի որոշման մեթոդը՝ որպես չափանիշ ընդունելով ֆինանսական կազմակերպությունների տարեկան շրջանառությունը:	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» և «է» կետերը, 68 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 130 հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ե կետ.

Սահմանել ընթացակարգ ԿԲ-ում ֆինանսական կազմակերպությունների համակենտրոնացումների հայտարարագրման համար:	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» և «է» կետերը, 68 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ե կետ.

3.2 Հակամրցակցային համաձայնություններ

Հաշվի առնելով ֆինանսական ոլորտը կարգավորող օրենքների այն դրույթները, որոնք ֆինանսական կազմակերպություններին արգելում են հակամրցակցային գործարքներ ու համաձայնություններ կնքել, որպես կարճաժամկետ նպատակներ առաջարկվում է՝

Իրավական ակտը	Իրավական հիմքը

Ընդունել կանոնակարգ (ԿԲ որոշմամբ) հակամրցակցային համաձայնությունների մասին, որով մասնավորապես կսահմանվեն՝ Հակամրցակցային համաձայնության հասկացությունը և տեսակները Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ազդակները, դրանց մասին տեղեկատվություն ստանալու կամ ձեռք բերելու աղբյուրները Համամրցակցային համաձայնությունները բացահայտելու համար անհրաժեշտ քայլերը, այդ թվում վերահսկողական գործիքները Չափանիշները ու կանոնները որով համաձայնությունը գնահատվում է հակամրցակցային, Շուկայում հակամրցակցային համաձայնության մասնակիցների մասնաբաժինների որոշման մեթոդը Հանդուրժողականության քաղաքականությունը, դրա հիմնական սզկբունքներն ու կիրառման ընթացակարգը:	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 83 «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22.2.հոդվածի 5-րդ մասի դ կետ

3.3 Գերիշխող դիրքի չարաշահում

Որպես կարճաժամկետ նպատակ առաջարկվում է ընդունել՝

Իրավական ակտը	Իրավական հիմքը

գերիշխող դիրքի որոշման և գերիշխող դիրքի չարաշահման հանգամանքի որոշման կարգ, որոն մասնավորապես պետք է սահմանվեն՝ Համապատասխան ապրանքային շուկայի, գերիշխող դիրքի որոշման նպատակները՝ քաղաքականության մակարդակով, Համապատասխան ապրանքային, աշխարհագրական շուկայի որոշման կանոններն ու մեթոդոլոգիան՝ հաշվի առնելով ֆինանսական ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները Չափանիշները և կանոնները, որոնց հիման վրա որոշվելու է արդյոք ֆինանսական կազմակերպությունն ունի գերիշխող դիրք Չափանիշները և կանոնները, որոնց հիման վրա որոշվելու է արդյոք ֆինանսական կազմակերպությունը չարաշահում է գերիշխող դիրքը Չափանիշները և մեթոդը որոնց հիման վրա որոշվելու է գերիշխող դիրք գրավող անձի մասնաբաժինը շուկայում:	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 83 «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22.2.հոդվածի 5-րդ մասի դ կետ

3.4 Որպես կարճաժամկետ նպատակ առաջարկվում է նաև

Իրավական ակտը	Իրավական հիմքը

ԿԲ որոշմամբ ընդունել Մրցակցության կարգավորման կանոններից բացառություններ կիրառելու կանոնակարգը, որով մասնավորապես կսահմանվի՝ Որն է բացառություններ կիրառելու հիմնավորումը և նպատակը՝ քաքաղաքականության մակարդակով, Որ համաձայնագրերի, գործարքների ու դեպքերի վրա են տարածվում բացառությունները Ըստ յուրաքանչյուր դեպքի ու համաձայնագրի, որոնք են բացառությունների կիրառման համար անհրաժեշտ պայմաններն ու չափանիշները, ինչպես են դրանք որոշվում (մեթոդոլոգիայի մակարդակով):	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» և «է» կետերը, 42-րդ հոդվածը, 68 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 83-րդ հոդված. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ե կետ, 22.2.հոդվածի 5-րդ մասի դ կետ:

3.5 Երկարաժամկետ առաջարկությունները

Սույն հայեցակարգի ներքո արվող երկարաժամկետ նպատակային առաջարկությունները մասնավորապես հետևյալն են՝

առաջարկությունը	Հիմնավորումը
Օրենքով սահմանել ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցության կարգավորման նպատակը՝ քաղաքականության մակարդակով.	Ֆինանսական ոլորտում մրցակցության կարգավորումը անհրաժեշտ է դիտարկել ֆինանսական համակարգի կայունության գերակա շահի լույսի ներքո, ինչը որպես քաղաքականություն պետք է ամրագրվի օրենքով.

Օրենքով սահմանել, որ ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցության կարգավորող է հանդիսանում ֆինանսական համակարգի կարգավորողը, և սահմանել դրա իրավասությունները	Ֆինանսական համակարգում մրցակցության կարգավորումն ըստ էության համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովման գործիքներից մեկն է հանդիսանում: Այս առումով օրենքը պետք է մանրամասն սահմանի ֆինանսական համակարգի կարգավորողի իրավասությունները ֆինանսական ոլորտում մրցակության կարգավորման առումով.
Ֆինանսական օրենքներում մրցակցության կարգավորումը տալ ըստ մրցակցության կարգավորման հիմնասյուների՝ Հակամրցակցային համաձայնագրեր, Գերիշխող դիրքի չարաշահում, Համակենտրոնացումներ, Օրենքով սահմանել հիմնասյուներից յուրաքանչյուրի կարգավորման հիմնական սկզբունքները, կանոնները.	Ֆինանսական օրենսդրությունը մրցակցության կարգավորումը չի համապատասխանում տեսությունում ու պրակտիկայում ընդունված մրցակցության կարգավորման հիմնասյուներին: Հետևաբար տարանջատված չեն դրանց հասկացությունները, հիմնական սկզբունքները և այլն, ինչը երկարաժամկետ նպատակների առումով օրենքի սահմանման խնդիր է.
Օրենքով սահմանել մրցակցության կանոնների կիրառման բացառությունների դեպքերը.	Իրավական կարգավորման արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար կլինի երկարաժամկետ նպատակների առումով օրենքով սահմանել մրցակցության կանոնների կիրառման բացառությունները, սահմանելով նաև դրանց կիրառման հիմնական սկզբունքները.

Հավելված 1

Մրցակցության գործնական խնդիրները Հայաստանում

Հայաստանի ֆինասական շուկայի մասնակիցները բազմիցս առնչվել են խնդրի, որը բխում է Կենտրոնական բանկի և Տնտեսական մրցակցության հանձնաժողովի տարանջատման անհստակությունից: Սա մասնավորապես գործնականում հանգեցրել է իրավիճակների, որոնք ՀՀ ֆինանսական ոլորտի օրենսդրության տեսանկյունից օրինաչափ են և ընդունելի, մինչդեռ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենքով պատասխանատվության կիրառման հիմք են հանդիսացել:

- Մասնավորապես՝ 2009 թվականին օտարերկյա բանկը թվականին ձեռք էր բերել Հայաստանում գործող բանկերից մեկի բաժնետոմսերի 51%-ը, ինչը ֆինանսական շուկայի զարգացման և հետագա զարգացումների տեսանկյունից հեռանկարային ներդրում էր համարվում Հայաստանի ֆինանսական շուկայի համար: Մինչդեռ Հանձնաժողովի կարծիքով վերոնշյալ գործարքը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն դիտվել է համակենտրոնացում, որը ենթակա է օրենքով սահմանված կարգով հայտարարագրման:
- 2011 թվականին Հանձնաժողովը վարչական վարույթ հարուցեց «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ նկատմամբ այն հիմքով, որ առկա է օրենքի հնարավոր խախտում, այն է՝ բանկը ձեռք է բերում շուկայում գերիշխող դիրք: «Հայբիզնեսբանկ» և «Գետամեջի խոզաբուծական ֆերմա» ՍՊԸ-ի միջև կնքվել է վարկային պայմանագիր, որի կատարման դիմաց գրավադրվել է «Էլշիննախագիծ» ՍՊԸ-ի բաժնետոմսերը: Գրավով ապահովված վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «Էլշիննախագիծ» ՍՊԸ-ի 100% բաժնետոմսերը:

Ընդ որում վերջին դեպքում գործ ունենք բանկի վարկային գործունեության հետ, երբ օրենքով սահմանված կարգով բանկը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց տրամադրում է վարկեր, որի դեպքում որպես վարկային պարտավորության ապահովման միջոց հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված գրավը: Այսինքն՝ օրինակ սույն դեպքում տեղի չի ունեցել բաժնեմասի ձեռքբերման դասական դեպք, այլ բաժնեմասերի փոխանցումը տեղի է ունեցել որպես

հետևանք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման, մասնավորապես վարկային պարտավորության չկատարմամբ պայմանավորված վարկի ապահովման միջոց գրավի առարկայի փոխանցմամբ:

Հարկ է նշել, որ վարչարարության տեսանկյունից ևս ֆինանսական շուկայի մասնակիցների առջև լուրջ դժվարություններ են ծառանում՝ հաշվի առնելով վերջիններիս՝ նույն գործի կապակցությամբ երկու մարմնի առջև պատասխանատու լինելու հանգամանքը:
ՀՀ կառավարությունը որդեգրել է գործարարության աջակցության քաղաքականություն. այն է՝ ցանկացած կարգավորում պետք է առնվազն նպատակ ունենա նվազեցնելու բիզնեսի համար հնարավոր խոչընդոտները և շուկա մուտք գործելու համար գոյություն ունեցող բյուրոկրատական գործընթացները, կրճատել վարչարարությունը:
Նոր վարչական ատյանի ավելացումն ինքնին հակասում է գործարարության աջակցության և բիզնեսի համար լրացուցիչ խոչընդոտներ չստեղծելու Կառավարության քաղաքականությանը: Բացի դրանից, առաջանում են մի շարք իրավական խնդիրներ, հատկապես վարչարարության իրավաչափության բնագավառում, մասնավորապես՝

- Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում: Ստացվում է, որ Նշանակալից մասնակցությանը նախնական համաձայնություն տալիս Կենտրոնական բանկն ի սկզբանե տալիս է իր եզրակացությունը ազատ տնտեսական մրցակցության սահմանափակման առումով գործարքի հնարավոր բացասական ազդեցության վերաբերյալ, այնուհետև տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նույն գործով բանկի վրա համակենտրոնացման հայտարարագրի ներկայացման կամ դրա հետ կապված տեղեկատվության ներկայացման լրացուցիչ պահանջ է դնում, ինչը հակասում է վերոնշյալ դրույթին:

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածն ամրագրում է վարչական ակտի նկատմամբ դրա հասցեատերերի վստահության սկզբունքը, որի էությունն այն է, որ վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը: Հետևաբար համապատասխան ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքի համաձայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստացած անձը չի կարող հայտնվել մի իրավիճակում, երբ այդ համաձայնությունը չի ճանաչվի իր համար բավարար հիմք մասնակցություն ձեռք բերելու համար, և
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, որի համաձայն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը: Սա ևս հիմք է տալիս պնդելու, որ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքները, որոնցով սահմանվում է համապատասխան անձանց իրավունքը Կենտրոնական բանկի կողմից տրամադրված նախնական համաձայնության հիման վրա ֆինանսական կազմակերպություններում ձեռք բերել նշանակալից մասնակցություն առավել բաենպաստ պայմաններ են ստեղծում տնտեսվարող սուբյեկտների՝ մասնավորապես՝ ֆինանսական ընկերությունների համար, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները, որոնցով սահմանվում է այդ սուբյեկտների լրացուցիչ պարտականությունը նույն գործի շրջանակներում իրականացնել նաև համակենտրոնացման հայտարարագրում:

Իրականացվելիք միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետը
Ֆինանսական շուկայում մրցակցության կարգավորման թեմայով փորձագետի հրավերք,*ֆինանսական ոլորտում մրցակցության կարգավորման վերաբերյալ սեմինարների և քննարկումների կազմակերպում՝ սույն հավելվածում նշված միջոցառումների իրականացման նպատակով*	1.ԻՎ 2. ՖՀԿՎ 3.Արտաքին կապերի և վերապատրաստման ծառայություն	1 հունիսի, 2012թ.
Կազմակերպել պայմանագրային աշխատակիցների մրցույթ Ֆինանսական վերահսկողության վարչության ներքո ֆինանսական համակարգում մրցակցության վերլուծության և ապահովման բաժնում ՝ ֆինանսական համակարգում մրցակցության կարգավորման հարցերով զբաղվելու նպատակով	1.Անձնակազմի կառավարման վարչություն 2.ՖՎՎ	5 ապրիլի, 2012 թ.

Համապատասխան շուկայի որոշման մեթոդաբանության մշակում, որը կներառի՝
 	
• Ապրանքային շուկայի որոշումը
  • Փոխադարձ փոխարինելի ծառայությունների որոշումը
  • Ծառայությունների բնութագրիչները
  • Օգտագործման նպատակը
  • Պահանջարկի տեսանկյունից փոխարինելության սահմանումը
  • Ինչ եղանակով հաշվարկել սպառողների տեսանկյունից ծառայությունների փոխարինելությունը
  • Առաջարկի տեսանկյունից փոխարինելության սահմանումը
  • Ինչպես որոշել ֆինանսական կազմակերպությունների կողմից նմանատիպ ծառայության մատուցման հնարավորությունը
• Աշխարհագրական շուկայի որոշումը
  • Որոշել այն շուկայի սահմանները, որտեղ ծառայությունները միատեսակ կամ բավարար միատեսակ են:
	1.ՖՀԿՎ,
	
	2. ԻՎ,
	
	3.ՖՎՎ,
	
	4.ՖՀԿԶՎ
		1 դեկտեմբերի, 2012 թ.

Համակենտրոնացումների (միաձուլումների) չափանիշները և գնահատման կարգը, որը կներառի՝
• Շուկայի կենտրոնացվածության հաշվարկման մեթոդոլոգիայի մշակում
  • *HHR-ի կիրառման առանձնահատկությունները ֆինանսական շուկայում և դրա առանձին ոլորտներում*
• Համակենտրոնացումների մասնակիցների՝ շուկայական մասնաբաժնի որոշման չափանիշները
• Համակենտրոնացումների արդյունքում շուկայական ազդեցության (market power) գնահատման մեթոդաբանության մշակումը
• Համակենտրոնացումների արդյունավետության գնահատումը ֆինանսական շուկայում
  • *Համակենտրոնացումների մերժման հիմքերը*՝ հաշվի առնելով դրանց՝ ֆինանսական շուկայում հակամրցակցային հնարավոր ազդեցությունը
  • Գնահատման չափանիշները հորիզոնական համակենտրոնացումների համար
  • Գնահատման չափանիշները ուղղահայաց համակենտրոնացումների համար
	1.ՖՀԿՎ,
	2. ԻՎ,
	3.ՖՎՎ,
	4.ՖՀԿԶՎ
		1 ապրիլի, 2013թ

Ֆինանսական ոլորտի հակամրցակցային համաձայնագրերի գնահատման չափանիշների սահմանում, որը կներառի՝ • Ֆինանսական կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի հակամրցակցային որակելու չափանիշները • Պրակտիկայում վերհանված տարածված հակամրցակցային համաձայնագրերի մոդելները • Հակամրցակցային համաձայնագրերի բացահայտման քայլերը • Հակամրցակցային համաձայնագրերի կիրառման բացառությունները հետևյալի լույսի ներքո՝ • *Հակամրցակցային համաձայնագրերի դրական հետևանքները ոլորտի զարգացման տեսանկյունից* • *Հակամրցակցային համաձայնագրերի դրական հետևանքները սպառողների շահերի տեսանկյունից* •	1.ՖՀԿՎ, 2. ԻՎ, 3.ՖՎՎ, 4.ՖՀԿԶՎ	1 հոկտեմբերի, 2013թ.
Գերիշխող դիրքի չափանիշների սահմանում և դրա որոշման կարգի մշակում, որը կներառի՝ • Ֆինանսական կազմակերպությունների համար գերիշխող դիրքի սահմանումը • Համապատասխան շուկայի որոշումը • Ընկերության շուկայական ազդեցության գնահատումը • Գերիշխող դիրքի վտանգ ստեղծող շուկայական մասնաբաժինների սահմանում • Գերիշխող դիրքի որակումը՝ ֆինանսական շուկայի առանձնահատկություններից ելնելով • Գերիշխող դիրքի սահմանման՝ գործնականում վերհանված մոդելները • Գերիշխող դիրքի բացառությունները:	1.ՖՀԿՎ, 2. ԻՎ, 3.ՖՎՎ, 4.ՖՀԿԶՎ	1 դեկտեմբերի, 2012թ.